COMUS

MAY 2016 / AM

Newsletter

Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Իրավիճակի նկարագրություն

Ճիաթուրա (Վրաստան).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Դուշեթի (Վրաստան).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Գորիս (Հայաստան).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Գյումրի (Հայաստան).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Լուտսկ (Ուկրաինա).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Մստիսլավ (Բելոռուս).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Պրիլուկի (Ուկրաինա).
Նախնական տեխնիկական գնահատում (ավարտվել է մայիսի վերջին)

Սորոկա (Մոլդովա).
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Ժովկվա (Ուկրաինա)
Ելակետային պլան (ավարտվել է մայիսի վերջին)

Հիմնական հատվածներ

2016 թ. հունվարին Եվրոպական հանձնաժողովը Բրյուսելում հրավիրեց COMUS ծրագրի ղեկավար կոմիտեի 2-րդ հանդիպումը: Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ազգային համակարգողները, COMUS-ի առաջատար փորձագետը, ինչպես նաև ԵՄ արևելյան հարևանության ծրագրի, Եվրոպայի խորհրդի, «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության, ԵՄ արևելյան գործընկերության մշակույթ և ստեղծարարություն ծրագրի ներկայացուցիչները: Հանդիպման օրակարգում քննարկվեցին իրականացված գործողությունների հաշվետվությունները, երկրներում առկա վիճակն՝ անդրադառնալով նաև ծրագրավորման և նախագծային փուլերի գործողությունների պլաններին:

Եվրոպայի խորհրդում COMUS-ի կառավարման համար կատարվել են նոր նշանակումներ: Պրն Հաքան Շեարեր Դեմիրը նշանակվել է ծրագրի պատասխանատու ադմինիստրատոր, ծրագրի հանրահռչակման և կազմակերպչական հարցերով վերջինին կօգնի տկն Անդրեա Ռոդրիգեզ-Պերեսը, տկն Իրմա Դզանկովիչ-Արսլանը կզբաղվի նյութատեխնիկական և ֆինանսական հարցերով:

Ներկայումս COMUS-ի մասնակից երկրները մշակել են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կառավարման մեխանիզմները: Կազմակերպվել են մի շարք փորձագիտական առաքելություններ. COMUS-ի առաջատար փորձագետ պրն Ֆիլիպ Սթեյնը 2016 թ. մարտին այցելել է Հայաստան, ԵԽ քարտուղարությունը ապրիլին այցելել է Բելառուս:
Քիշնևում և Սորոկայում (Մոլդովայի Հանրապետություն) կայացավ 2-րդ աշխատաժողովը՝ COMUS-ի 9 պիլոտային քաղաքների 32 ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնակիցները ակտիվ ներգրավված էին քննարկումներին: Ծրագրավորման փուլի արդյունքների քննարկման և Նախագծային փուլի վերաբերյալ տրամադրված տեղեկույթի հիման վրա՝ բոլոր 9 պիլոտային քաղաքների ներկայացուցիչների միջև տեղի ունեցան կառուցողական քննարկումներ, ինչն ավելի ամրապնդեց COMUS–ի ցանցը:

Ջանքեր են գործադրվելու COMUS-ի տեսանելիությունը բարձրացնման նպատակով: Տեսանելիության գործողությունները իրենցից ներկայացնում են նորությունների տարածում, պիլոտային քաղաքներին նվիրված գովազդային բացիկների պատրաստում, ընտրված վայրերի/հուշարձանների համար կարճամետրաժ գովազդային ֆիլմերի պատրաստում, բրոշյուրների կազմում, ինչը կուղեկցվի նաև ծրագրի հանրահռչակմանն ուղղված կրթական ծրագրերով: Դրանք կարտացոլվեն COMUS-ի գործող կայքում: Մասնակից պիլոտային քաղաքները պարբերաբար հրավիրվելու են խորհրդակցությունների կայքում տեղադրվելիք նյութերի շուրջ տրամադրելու համար օգտակար թարմացումներ:

Ծրագրավորման փուլը կամփոփվի մայիսի վերջին, ինչին կհաջորդի 2016 թ. հունիս-դեկտեմբերամիսներին իրականացվողՆախագծային փուլը: Այդ փուլի ուղեցույցներն ուղարկվել են ազգային համակարգողներին:

Հաջորդ քայլերը

- Քաղաքաշինության պլանավորման վերաբերյալ երրորդ աշխա-տաժողովը նախատեսվում է հուլիսի սկզբին:
- Համայնքի ներգրավվածությունը Ժառանգության պլանավորման գործընթացներում թեմայով 1-ին ուսումնական այցը առաջին ուսումնական այցը Գերմանիա նախատեսվում է հուլիսի վերջին:
- Նախագծային փուլի Գործողու-թյունների ծրագրի մշակումը կամփոփվի հունիսի սկզբին:

www.coe.int/comus
e-mail: comus@coe.int